ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Իդա Հարությունյան, ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2023թ. նոյեմբերի 20–24-ը:

3. Հրավիրող կողմը.

Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարություն և Վիեննայի միացյալ ինստիտուտ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Պետական ֆինանսների կառավարում և վարչական բարեփոխումներ» թեմայով դասընթացին մասնակցելու նպատակով:

5. Քննարկված թեմաները

- Պետական ֆինանսների կառավարման բարեփոխումներ
- Ավստրիայի տնտեսությունը, տնտեսական զարգացման առանձնահատկությունները և տնտեսական քաղաքականությունները
- Հարկային քաղաքականություն և վարչարարությունը
- Բյուջետային ծախսերի դասակարգում և իրականացում
- Կապիտալի հոսքեր և դրանց կառավարում
- Վարչական բարեփոխումների միտումները և ընթացիկ ծրագրերը
- Քաղաքականության պլանավորում և համակարգում
- Միջկառավարական հարկաբյուջետային հարաբերություններ – հարկերի բաշխում՝ (Ավստրիայի Հանրապետության օրինակ)
- Խորհրդարանի դերը որպես վարչարարության շարժիչ ուժ
- Բյուջեի կառավարում և բյուջեի բարեփոխումներ
- Կանաչ բյուջետավորման տեսլականը
- Էլեկտրոնային կառավարում. Ավստրիայի և ԵՄ-ի հեռանկարները

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացին մասնակցում էին ընդհանուր թվով՝ 29 ներկայացուցիչներ թվով 18 երկրներից:

Դասընթացի ընթացքում քննարկվող հարցերը հիմնականում առնչվում էին պետական ֆինանսների կառավարմանը՝ դրանց բարեփոխումներին, հարկաբյուջետային հարաբերություններին, բյուջեի կատարմանը, հարկերի բաշխմանը, վարչական բարեփոխումներին, էլեկտրանային կառվարման մեխանիզմների կիրառմանը:

Հնգօրյա դասընթացի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Հաշվողական գործակալության, Խորհրդարանի բյուջետային գրասենյակի, Վրաստանի կառավարության Վիեննայի միացյալ ինստիտուտի մասնագետների հետ:

Յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո դասընթացի մասնակիցների կողմից տրվում էին հարցեր և տեղի էին ունենում քննարկումներ:

Դասընթացը կազմակերպվել է գործնական աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով (պայմանական տնտեսությունների օրինակով), որի ընթացքում յուրաքանչյուր մասնակցի կողմից տրվում էր խնդրի կարգավորման իր տեսլականը, ֆինանսական կարգավորումները և մարտահրավերներին ուղղված բարեփոխումները:

Ընդհանուր առմամբ դասընթացը բավականին հետաքրքիր էր և բովանդակալից՝ հարուստ վերլուծություններով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ: Դասընթացից ստացված գիտելիքները կօգտագործվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետագա աշխատանքներում:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Կազմակերպվել են խմբակային աշխատանքներ և մասնակիցների կողմից կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծանոթանալով տարբեր երկրներում իրականացվող հարկաբյուջետային հարաբերություններին և ֆինանսական քաղաքականությունների մշակման ու իրականացման առանձնահատկություններին՝ առաջարկում եմ քննարկել դրանց լավագույն միջազգային փորձերն ու արդի գործիքակազմերը՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական ֆինանսների կառավարման և վարչական բարեփոխումների, բյուջեի կատարման, հարկերի հավաքագրման, ծախսերի իրականացման, կանխիկ հոսքերի կառավարման և էլեկտրոնային վճարումների իրականացման համատեքստում, քանի որ լավագույն փորձի դիտարկումն առաջնային կարևորություն ունի արդյունավետ քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

29/11/2023թ